

8. Универсалы Петра Великаго къ буджацкимъ и крымскимъ Татарамъ Дѣйств. чл. ठ. Ч Корша.

Ահա մի օրինական ժողովածու, որի իւրաքանչիւր յօդուածը տռանձին առանձին վերցրած ներկայացնումէ երկար ժամանակուայ լուրջ և գիտնական մտածմանց արդիւնք:

Ցիշեալ գրքերից զատ Արարատի խմբագրութեան և Մայր Աթոռի մատենագարանի անունով ստացուել են նաև հետեւեալ գրքերը:

Ա. Պերճ Պուշեանց. Սկիզբն երկանց վէպ. Հրատարակութիւն Ալղբիւր «Տարագ» հանդ. Թիֆլիս 1893. գինն է 1 ր. 20 կ.

Ե. Մեսրոպի Դաւթեան թաղիտեանց. Եղերերգութիւն յօրհամ թանկայ թաղիագեանց. արար հեղինակ քնարին Սիրահարի. Թիֆլիս. 1893. գինն է 40 կ.:

Գ. Ն. Ա. Պուտիատա. Վիլեամ Չաննենդ. թարգ. Կ. Կ. Մելիք Շահնազարեանց. Հրատար. Բագուայ մի խումբ երիտասարդների. Բագու 1893. գինն է 40 կ.:

Առանձին կերպով յիշատակութեան և շնորհակալութեան արժանի են հետեւեալ պարոնները, որոնք առաջինն են, որ լոելով Արարատի հրաւերը Պօլսիդ ուղարկումեն մեզ իւրեանց շարադրութիւնը:

Դ. Շար հայ կենոագրութեանց. գրեց Արքահամ Յ. Այվազեան Կ. Պոլիս 1893.

Ե. Խրական կեանքի նուագներ. Միհրան Յովհաննիսեան. Երկրորդ տպագրութիւն, Կ. Պոլիս 1893. գինն է 2 զուրուշ 20 փարայ:

Դ. Առառածաշունչ մատեան Հին և Նոր Կոտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի լոյս ընծայեալ համեմատութեամբ երրոյական և յունական բնագրաց. Կ. Պոլիս. 1892. ստացել ենք շնորհակալութեամբ երեք օրինակ: Գրքի համառօտ յառաջարանից քաղելով այսուեղ ենք գնում հետեւեալ տեղեկութիւնները: Ներսէս Պատրիարքը գրգել է ս. Գիրքը հրատարակող Ամերիկեան: ընկերութեանը հայերէն գրաբար Առառածաշունչը հրատարակելով արժանագին տարածի ժողովրդի մէջ: Ընկերութիւնը երկար չէր վճռում հետեւել այդ յորդորին, ողի

մին ի կանոնաց ընկերութեանն է ի լոյս ընծայել թարգմանութիւնն
ի բնագիր լեզուաց գրոյն։ իսկ հայերէն թարգմանութիւնը եղել
է յունարէնից, թէպէտ անհամեմատ գեղեցիկ ու ընտիր։ Վերջը
մի միջոց են գանում հայերէն թարգմանութիւնը համեմատել
երրայերէն բնագրի հետ և հայերէնը անփափոխ թողնելով, երրայե-
րէնի տարբերութիւնը դնել լուսանցքում։ Հայերից կազմումէ մի
մասնաժողով, որը բաղդատելով ի լոյս է ածում առաջ Նոր կտո-
կարանը և այժմ իրեւ փորձ տուել է չնգամատեանը։

Դժբաղդաբար մենք չենք կարող այսուեղ յայտնել հրատարա-
կութեան գինը։ Յայց ինչպէս Մասնաժողովը խոստանում է և
ինչպէս ցոյց է տալիս զրքի խնայողական տնտեսութիւնը թէ
թղթի և թէ տպագրութեան մէջ, գրքի գինը թանգ լինել չէ
կարող և ահա շնորհիւ օտարների։ Հայ ժողովուրդը կարող է ար-
ժան գնով ձեռք բերել իւր նախնիքների ընտիր թարգմանու-
թիւնը և գրքի միայն հարկաւոր է բաղդատելով ստուգել, թէ
հրատարակիչները արդիօք մի որեւ է բան հայերէն բնագրից
չեն փոխել, ինչպէս իրենք են խոստանում։

Գերմաներէն լեզուով ստայել ենք՝ Waldemar Belck, archäola-
gische Forshungen in Armenien. 1893=Վալդեմար Բելք. Հնագի-
տական հետախուզութիւնք Հայաստանում։ Ոյս գրութիւնը մենք
յետոյ կթարգմանենք Արարատի համար։

*Արարատի նախընթաց համարումն գրախոսական բաժնում,
մի քննագատական յօդուածումն ակնյայնի կերպով ցոյց էր
արուած, որ Աահակ քահանայ Աահակեանցի յայտնի կրօնի (սրբ-
բաղան պատմութեան) գասագրքերը գրտիան - գողութեան (պլա-
գիատ) արդիւնք են։ Որչափ և անպատուաբեր լինի մեր գրակա-
նութեան համար այդ խայտառակ և կարծուածից աւելի շատ